Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱԼԱԶԱՆ

Հա Հ. Տոպչյան
Ռ I.1
16399

ՊՈԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1931

891.99
Ա-28

891.99
33995-62
Ա-28
Սրապյան
Մեկ 3255 29/ԳՍՀ
Մ/Ո 3255 29/m

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ՀՍՍՌ - РМ. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
33995-62

891.99
Ա-28

30 DEC 2010
30 MAY 2005

Ա. Լ. Ա Զ Ա Ն

Հարգելի տիկին Զարդի Զեյնալովա
28/XII 31 թ.
Ա. Ալազան

Ո Ո Ե Մ
ԴԱՏԵՐԱԶՄԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՀՆԳԱՄՅԱ ԳԼԱՆԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1931 թ.

E- JAN 2013

17749

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
Հրատարակ. № 1767
Գլավլիտ 6686 (բ)
Պատվեր 4045
Տիրաժ 5000

Ներկա պոեմը գրված և հրատարակված է «Խորհ. Հայաստան» թերթում, 1929 թվին, համաշխարհային պատերազմի 15-ամյակի առթիվ. ներկայումս, հրատարակվում է հեղինակի նոր հավելումներով ու վերամշակումով, այդ պատերազմի 17-ամյակի առիթով:

ՊԵՏՀՐԱՏ

1931 թ., հուլիսի 17

ԲԱՑԼԵԼԻԿՅԱՆ ԲՈՑԱՎԱՌ ՎՈՂՋՈՒՅՆ —
ՅԵՐԲՈՐԴ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՆ

1914

Ա.

Նորից վարդերը վառ են,
նորից ամառ հասուն.
բայց այդ ի՞նչ, այդ ի՞նչ ամառ եր—
արնոտ ու մահասարսուռ:

Արնով եր բացվում որը,
գանգե՛ր,
գանգե՛ր,
այնքա՛ն գանգեր,
ազդրեր ու միս.
կյանքը—
արնոտ մոդեռն,
կարմի՛ր,
կարմի՛ր:

Կյանքը—
մողես կարմիր,
արյան մեջ սողացող,
ստորաբաշ ու անմարմին,
դիակնացող:

Բ.

Արյան,
բոցի կեսոր:
Ձերմակ վայլսի գիշեր:
Դեմքեր—
լիրք ու բսու,
ՀՀե՛ր,
ՀՀե՛ր,
ՀՀեր!!!

Այնտեղ—
շամպայն, համբույր,
բամվող մարմին ու շուրթ.
այստեղ—
մահը անվույթ,
մռխիր, արյուն և սուր,
հեռու հեզահամբույր—
ՏԻՐԱՄԱՑՐ
ու ՀԻՍՈՒՍ:

Հիսուսը որինեբզող—
դեղնադեմ ու սևաթև:
Իսկ որինանքովն այդ կույր—

բանակները յերկու—
բարտեսը կրծվատեն:

Կրծվատեն ու կրծվատվեն—
զորքերն անհամար,
այնտեղ—
ՄԵՐԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՎԱՐԴԵՐ,
այստեղ—
ՄԱՇ!!!

***

Նորից վարդերը վառ են,
նորից ամառ հասուն.
բայց այդ ի՞նչ, այդ ի՞նչ ամառ եր—
արնոտ ու մահասարսուռ:

Գ.

Արյուն ու մահ,
արյուն ու մահ,
բանակները հորդուն—
բաղաքների վրա,
վոդջ աշխարհում:

Ծովերն—
արնով են ծփում,
ոդը—
ծխում,
մահու ուրուն է սավառնում—
չար, անխնդում:

վոնց ժանիքներ մահու—
արնայերախ թնդանոթներ,
ու արևը—
աչք մի զարհուր,
ուռած և արնաժեռ:

Դ.

Ցեղավ չուգուն կերտողը—
հանքափորի դեմ,
արնով ներկեց—
հողը.
ու դեռ գյուղացին,
գերանդովն իր—
հնձեց կյանքե՛ր,
կյանքե՛ր:

Չուգուն կերտողն ընկավ,
ընկավ—
«հերոսաբար»
ու հանքափորն ընկավ—
«հայրենիքի համար»:

Հայրենիքի՛,
հայրենիքի՛,
այդպե՛ս:
—Պետք էր պաշտպանել այն,
այդպես էր պատգամել—
ինքը, պարոն

սոցիալ-
դեմոկրատիան,—
այսինքն Վանդերվելդե արքան,
այսինքն Կաուցկի, Նոսկե,
մինչև...

ՄՈՐԳԱՆ:

Ու ընկավ նա—
վռնչ աշխարհով:
Չուգուն կերտողն ընկավ
ու գյուղացին ահով:
Քաղաքներում ընկավ
ու դաշտերում,
«հայրենիքի համար»—
դիակներով,
դիակներով իր անհամար—
ծածկեց հողը,
ու ծովերն—
արնով:

Ցե.

Արնաներկ է հողը,
գանգեր,
գանգեր,
շրջում է պատառոտող—
կապիտալ անգղը:
Այսինքն Մորգան,
այսինքն Ռոդշիլդ,
մինչև Նոսկե,

մինչև Բոնկուր,
յեվ Վանդերվելդե արքան:

Սավառնում է դեղնաթև
ու մահատարած:
Սավառնում առաջ,
տվե՛ք նրան դեռ—
վոսկի առատ,
տվեք հո՛ղ,
շուկա՛:

Դրա համար ել—
մահը առատ է
ու արյունը—
եժան.
դրա համար ել—
այստեղ—
արյան ամառ է,
իսկ այնտեղ—
շամպայն:

Այնտեղ—
շամպայն,
այնտեղ—
վիսկի,
ու արբեցում,
այնտեղ—
անքան
մարդիկ հարբած—

վոդջ աշխարհը դրել ռիսկի
յեվ գազազած—
կանանց մարմինն
ու քարտեսն են պատառոտում:

Պատառոտում,
ծվատում են—
վոդջ քարտեսը բաժան-բաժան,
դրա համար—
մա՛հն է,
մահն է խնդում
քրքջալի
ու գազազած:

***

Նորից վարդերը վառ են,
նորից ամառ հասուն,
բայց այդ ի՞նչ, այդ ի՞նչ ամառ եր—
արնոտ ու մահասպառուն:

2

«ՀԱՆՃԱՐՆ ՀԱՅԿՅԱՆ»

Ա.

Իսկ «հայոց ա՞զգը»—
ազնվազա՛րմ ու դյուցազուն,
նա—
վոր սուտ պարգևել է—
ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆ,
ԴԱՎԻ ՂԱԶՈ,
նու,—
վոր յեղել է «մե՛ծ» ու «հզոր»
բոլոր մարտերում,
նա—
վոր «կերտել է»—
«Բանկ-Ոտտոման»
ու «Խանասոր».—
ինչպե՞ս, ինչպե՞ս նստի այսար,
հանգիստ,
հեռու:

Ինչպե՞ս չելնի,
չոժանդակի—
«Մեծ դաշնակիցներին»
ինչպե՞ս տեղում հանգիստ նստի—
խմբապետ Քեռին:

— Ամբողջ ազգով
պետք է յելնենք,
հզոր ու զինված,
խլենք հողը մեր սրբազան,
հայ ազգ,
հառա՛ջ...

Դրեց կոնդակ վողջ աշխարհին—
«Ամենայն Հայոցը»,
— հայ կոսպիտալին է,
թող նա՛ տիրի,—
ծովերից ծովը:

— Խլենք հողը մեր սրբազան,
այսքա՛ն տարի անիրավված:
— Վերջի՛ն, վերջին կռվի համար
հայ ազգ—
պատրաստ!

Բ.

Ու թափվեցին, յեկան
ու թափվեցին, յեկան—
աշխարհի ծալքերից

խմբե՛ր,
խմբեր կամավորական,
դեղնազգեստ
ու ...«Հայկա արյամբ»։

Ասին—
— մերն է հերթը·
«ՄԱՀ, ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»·
— Տվեք վեց վիլայեթը
յեվ վոչ մի թուրք...

— Բա՛վ է համբերություն...

— «Հիմի յել լռենք յեղբայր,
Հիմի յել...»

— «Ոն ա՛նդր հառա՛ջ...

— «Մեր հայրենի՛ք թշվա՛ռ, անտեր...

— «Հառա՛ջ, հառա՛ջ...»։

Գոչում է «վոդջ ազգը»—
մարտաշունչ յերգեր։
— Ի՞նչ ես նստել,
յե՛լ,
յե՛լ։

Գ.

Որոնեց «Ամենայն Հայոցը»,
դրեց նամբա·—
— Վերևում,—ասեց,—Աստվածն է,
ներքևում՝
ռուս արքան։
— Ցեղե՛ք արժանի
հայոց ազգի վորդիք...

— «Մե՛ր հայրենիք,
— Մե՛ր, հայրենիք...»

— Պատվով դուրս յեկեք
մարտիցն այս որհասական...

— «Թող փողփողի թշնամու դեմ,
թող կործանվի Տանկաստա՛ն...»

Դ.

Ընկավ հայ գյուղացին,
թուրք գյուղացին ընկավ—
սրախողող
ու արնաթաթավ։
Արնով,
արնով ներկեց—
վեց վիլայեթը։

Սարսուռ,
կմախք
ու մահ:

— «Հիմի յե՞լ լռենք...»

Ու աշխարհում համակ—
արյուն,
մահ
ու վերք:

Իսկ այնտեղ—
«դաշնակիցները մեծ»
ու դաշնակները—
պատրաստում են դեռ
թնդանոթի միս:

— Հա՛յ ազգ,
ի՞նչ ես նստել,
յելի՛ր,
յելի՛ր:

— Ցելիր վերջին մարտի,
վերջին մարդով...
— Զար թշնամին
սարսափի թաղ...

— Զարկ վերջին հարվածը...
«ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»...
«Որհնյալ է քո Աստվածը—
«Արդար հայություն...»

Տպում են կոչ ու թռուցիկ
հայոց ազգի «գիտունները»
— հեռու թե մոտիկ—
հաղթանակը մերն է:

Դ.

Իսկ ներսում—
Կովկասյան արքաները են
պատմությունը կիսում:

ՄԵՆՇԵՎԻԿՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ.—

— Ազատել հայերին Թուրքայից!
— Վռնդել Թիֆլիզից դուրս!
— Պատերազմ Հայաստանին!
— Մերն է Ցերևանն ու Բագուն:

ՄՈՒՍԱՎԱԹԱԿԱՆ ԱԴՐԲԵՅՋԱՆԸ.—

— Խլել Ղարաբաղը հայերից!
— Խեղդել հայերին արյան մեջ!
— Կովկասը՝ մենք վայելենք!
— Վրացուն ու հային՝ վերջ!!!

33995-62

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ.—

— Պատերազմ Ադրբեջանին!
— Մաքրել Հայաստանը թուրքերից!
— Պատերազմ Վրաստանին!
— Վերցնել բոլորին գերի!

ԽՄԲԵՐԳ ՄԻԱՍԻՆ.—

— ՊԱՏԵՐԱԶՄ !!!
— ՊԱՏԵՐԱԶՄ !!!
— ՊԱՏԵՐԱԶՄ...

«ՄԵԾ ԴԱՇՆԱԿԻՑ» ԱՆԳԼԻԱՆ.—

— Ամե՛ն,
տերն ընդ ձեզ,
պատերազմե՛ք,
գնդակ ու հրացան—
ինչքան ուզեք:
Փոխանակե՛նք—
նավթն ու բամբակը—
մի քիչ...
Հարկավոր են մեզ:

Ամե՛ն,
տերն ընդ ձե՛զ...

Ն.

Ընկավ վերջին մարդը—
վերջին մարտում,

հա՛յ ազգ,
հրնվի՛ր,
խնդա—
«փրկված ես» դու:

Ունես հրացան անգլիական,
տրեխ հայրենի,
ունես մինիստր ու քաղցր կար
ու ելի՛, ելի՛:

Ունես մայրաքաղաք,
յեվ դիակնացած յերկիր,
ի՞նչդ ե,
ի՞նչդ ե պակաս—
— յերգի՛ր,
— յերգի՛ր:

3

Հ. Հ.

ԱՅՍԻՆՔՆ

«ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՅԵՐԿՐՈՒՄ

Ա.

«ՉԱՐՈՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՀԱՍՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ.

Ծաղրիզ գյուղի բնակիչ Նոր-Բայազիդու գավառի

ՆԻԿԱՐ ԿԻՆՔ ՍԱՐԳԻՍ ԱՌԱԿԵԼՈՎՆԱ.

ԽՆԴԻՐ

Վարդիս Ավիրահամ Սարքսյան Առաքելյանց, վորպես պատասխանատու անցյալ 18 թվի սեպտեմբեր ամսվա զորքին հակառակելու մասին. ահա մոդավորապես 8 ամիս է, վոր բանդարկված է Ներքին Ախտի բանդում: Առանց մի քննության յեվ վնռի. իմ չքավորությունս չկառավարելու պատճառով յես դիմեցի պ. սունդյաձներին վորից պատասխանում են թե այդ կալանավորի

պատասխանատվությունը յեվ ով լինելը մեզ մոտ չի գրված. յեվ ստանում եմ պատասխան թե ով բանդարգել է թող նա էլ թողնի, հիմա. ես ինչպես կլինի 65-տարյա ունեմ 3(8) անձ իկական տեր ընտանիք, վորոնք այս մի տարի յեր վոր ուտում են զանազան սատկած անասունների լեշ յեվ վայրի բույսեր ահա շուտով կատորվելու յենք բոլորս էլ սովից յեվ ցրտից—իսկ վարդիս Ավրահամը առանց քննության յեվ մեղավորության տանջվում է բանդում:

1919 տարի ՆԻԿԱՐ ԱՌԱԿԵԼՈՎՆԱ
7 ն ոգոստոսի (անկրակետ)»

ԿՈՉՈՒՆԲ ՄԵԾԱՐԱՆՑ

Ի պատիվ ՎՍԵՄ. Պ. Ա. ԽԱՏԻՍՅԱՆԻ
ի Շեֆերտ գանդակի
ի 20 ոգոստ, 1926 թ.
ի Գահիրե,

ՅՈՒՅԱԿ ԿԵՐԱԿՐԱՑ

ԱՐԴԱՆԱԿ ՏԱՍՊԱ
ԱՐՔԱՅԱՋՈՒԿ ՍԵՎԱՆԱ
ՀԱՎԵՂԵՆ ՏԱՐՈՆԱ
ԾՆԵԲԵԿ ԱՐԱՐԱՏՅԱՆ
ՎՈՉԽԱՐԵՆԻ ԹՈՐՏԻԿ
ԳԵՂԱՐԴՈՒՆՅԱՑ
ԱՂՅԱՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ
ՓՐՓՐԱԳԻՆԻ ԴՈՂԹԱՆ
ՄԻՐԳ ԱՐՏԱՄԵՏՈՒ
ՍՈՒՐՃ ՓԱՐԱՎՈՆՅԱՆ
(պ. Ա. Խատիսովի պատվին՝ Գահիրեյում տրված խնջույքի ճաշացուցակը)

Հավերժական ձյունե
Արարատին մոտիկ—
Հայաստան եր:
Մաե,
ցուրտ,
ցնցոտի:
Արնին սերմնացան—
արտում,
հանդում,
վոռոգում—
վարար արյամբ:
Հողը ժանգ,
անտերունջ.
յերկիր—
«հարյալ»:

Փորիր գերեզմանդ,
խաչը,
ոգնող,
մարտը—
գերազանց ե,
գնա՛:

— Հա՛յ մարդ,
ընկի՛ր,
— հա՛յ մայր,
յերգի՛ր—
մահը վորդուդ,
թո՛ւնդ ե,

թո՛ւնդ ե
կռիվը թունդ:

— Մա՛հ ընդունիր—
յեռագույնից.
«թող փողփողի—
թշնամու դեմ»,
թող վողողվի—
արյամբ հողը,
դու—
«հաղթող ես»:

Բ.

Մայրերին—
ցեխ,
կական,
գաղթական,
— «կանչի՛ր կռունկ...»

Մաուզերի ռեխ,
մինիստրական կրունկ:
Լեշ,
ադր,
ոչրյուն,—
ժողովրդական սնունդ:
Հարյուր
ու կրկին հարյուր—
մինիստր,
լիազոր,

պարլամենտի անդամ,
յեվ դեռ այնքա՛ն
մաուզեր,
պլետ,
յեվ արյան ծովից
վեր կարկառած—
ձեռքե՛ր,
դեմքե՛ր:

Գ.

Հավերժական ձյունե՛
Արարատին մոտիկ—
Հայաստան եր:

Հրնվի՛ր
Մասյա՛ց գագաթ,
«ազատության»
դու փայլ հազար:
— «ՆԱ՛ՑԻՐ ՆԸՐԱ՛Ն»·—
յերկիր խուժա՛ն,
«ՑԵ՛ՐԵՔ ԳՈ՛ՒՑՆԻ...
ՆԸՎԻՐԱ՛ԿԱՆ...»·—
վորբ,
գաղթական:
«ԹՈ՛Ղ ՓՈՂՓՈՂԻ...»
— Ցելի՛ր հողից,
հողում ընկի՛ր
ու մահ գրկիր...
«ԹԸՇՆԱՄՈՒ ԴԵՄ...»
— Ցերկի՛ր «Ցեղե՛մ»,

մա՛հ,
ու կական·
«ԹՈ՛Ղ ԿՈՐԾԱՆՎԻ—
ՏԱՃ-
ԿԱՍ-
ՏԱՆ...»
. . . . . .
. . . . . .
Ու մահ,
ու տենդ,
ու սուր,
խմբապետ ու Հիսուս,
«ազատության դրոշ»,
ԴԱԼԻ ՂԱԶԱՐ,
ԴՐՈ՛,
շրապնել ու կրոն,
հրկիզում,
սպանդ,
սվար·—
«Ազա՛տ Հայաստան»,
«Ցերկի՛ր դրախտավայր»:

Հավերժական ձյունե՛
Արարատին մոտիկ—
Հայաստա՛ն եր:

Դ.

«Կոչունք Մեծարանաց»
պարո՛ն խատիսով,
այնտե՛ղ—

Հայաստան է,
այնտեղ—
ՍՈՎ!
այնտեղ—
կյանքեր թող—
կապտեն, սևանան,
քեզ վայելի—
«ԱՐՔԱՅԱԶՈՒԿ ՍԵՎԱՆԱ»:

Այնտեղ—
թալանի թող
մինիստրքդ գործուիլա,
դու կրծիր տենդով—
«ԽՈՐՏԻԿ ԳԵՂԱՐՔՈՒՆՑԱՑ»:

Այնտեղ—
մանկան կրծող
մայրը գաղթական,
իսկ քեզ—
«ՓՐՓՐԱԳԻՆԻ ԳՈՂԹԱՆ»:

Այնտեղ—
մահեր,
կոտորումներ ցոր,
քեզ վայելի—
«ՀԱՎԵՂԵՆ ՏԱՐՈՆՈ»:

Այնտեղ—
մահ,

մինիստր,
մոխիր ու սով,
յերկիր—
արյուն հագած,
իսկ քեզ—
պարոն խատիսով—
ԽՆՃՈՒՑՔ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ:

Ե.

Ու դեռ
մայթերին հյուծված կյանքեր,
վոնց գերանդուց ընկած հասկեր,
իսկ վերևում—
խրախճանքն է հորդել.
խմում է
ԳՆԴԱՊԵՏ ՀԱՍԿԵԼԸ:

Խմում են և «մերոնք»—
դաշնակ մի քանի ռեխ,
մի քանի ցիլինդր ու միրուք—
որորվում են դեռ:

Մուրում են այնտեղ,
Հասկելից—
յեվ հրացան,
յեվ ալյուր,
յեվ բաղդ,—
գթաղերս աչքերով արնալի—
մի քանի ցիլինդր ու փափախ:

— Ազնիվ է ձեր ազգը,
ապրելու արժան,—
ասում է Հասկելը «հուզված»—
բաժակաճառ:

— Ձեր հոգին մաքուր է,
ձեր բամբակի պես,
սի՛րտը, սի՛րտը մորմոքում է—
...հայոց վշտի հանդեպ:

— Մեր հզոր ձեռքի տակ
դուք անպարտելի յեք,
ձեզ հաղթություն ու փառք—
«փոքրի՜կ դաշնակիցներ»:

— Դո՛ւզ կխոսա հարիֆը,
հոգո՜ւդ սատկեմ.—
խմբապետ Զարիֆը
տեղից ցատկեց:

— Ավետարան ա,
բերան հո՛ չի,
լուսահոգի մարդ,
ե՛յ,
հայվա՛ն պերեվոդչիկ,
մեր թարգմանա:

Ասավ խմբապետ Զարիֆը,
փափախը տվեց հատակին,
թռավ—
«կինտավուրի»
ու—
«Մալիտվա Շամիլ...»

***

Իսկ մայթերին—
հյուծված կյանքեր,
վռնց գերանդուց ընկած հասկեր,
«հայոց ազգի» կենացն է խմում—
ԳՆԴԱՊԵՏ ՀԱՍԿԵԼԸ:

———

4

1917

Ա.

Վողջ աշխարհում—
կարմիր ամպեր
մահու,
գազի.
բաղաքներում—
հողաքումբեր
ու մահ գազիր:

Սրճաներկ է—
ծովը,
հողը,
գանգե՛ր,
գանգե՛ր.
ՀՐՋՈՒՄ Է պատառոտող—
կապիտալ անգղը:—

Այսինքն Մորգան,
այսինքն Ռոդշիլդ,
մինչև Նոսկե,
մինչև Բոնկուր
յեվ վանդերվելդե արքան:

Բ.

Ելի մահը վոռնաց,
ելի արյուն:
— ՊԱԼԱՏՆԵՐԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ:
ԽՐՃԻԹՆԵՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ:

— Խրճիթներին խաղաղություն,
պալատներին մահ—
թնդաց կոչը բայլշևիկյան
աշխարհում համայն:

Մարտը փոխվեց—
ՆՈՐ ՄԱՐՏԻ:
— ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱԼԱՏՆԵՐԻՆ,—
յելավ,
ալեկոծվեց—
ԴՐՈՇԱԿԸ ԿԱՐՄԻՐ:

Դրոշակ—
կյանքի,
ու հաղթության
ու դրոշակ—
մարտի.

ՎՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԲԱՑԼՇԵՎԻԿՅԱՆ ԴՐՈՇԻՆ
ՈՒ ՄԱՐՏԻՆ:

***

Ցեղավ վճռական գրոհ,
հաղթանակի ռումբեր:
ՎՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԲԱՑԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՐԵՎ
ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ:

Կարմիր դրոշի ներքո—
ՄԱՐՏ ՈՒ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ,
կարմիր դրոշի ներքո—
խաղաղություն:

Գ.

Անգլիական գամբռեր,
գամբռեր կապիտալի—
ռահմանից ներս,
ռահմանից դուրս—
վռռնում եյին
ու վընգռտում:

Անգլիական գամբռեր—
կոլչակ,
բարոն Վրանգել,
Մախնո
յեվ դեռ—
ինչ վոր չնչին նժդեհ:

Անգլիական թնդանոթներ,
վոչիլ,
արաղ
ու կախարդան:

Ամենքը մեկ,
մի թշնամի,
հազարանուն,
հազարյերախ·—
յելա՛ն, յեկա՛ն,
յելա՛ն, յեկա՛ն—
խորհուրդների
յերկրի վրա:

Ցելա՛վ,
հորդե՛ց
ամենքի դեմ—
ԿԱՄՔԸ ԲԱՑԼՇԵՎԻԿՅԱՆ
ու կոխոտեց—
ԱՄԵՆ ԳՈՒՑՆԻ,
ԱՄԵՆ ԲԱՆԱԿ·
Ամենքի դեմ—
ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇ
ՈՒ ՀԱՂԹԱՆԱԿ·

———

5

ՀՆԴԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Ա.

Կյանք են առնում համառ հնգամյակի թվերը,
մաքառում են խրոխտ ու մարտական,
բայց այդ ի՞նչ, այդ ի՞նչ արնոտ թվեր են—
հնգամյակին պարգած:

— Գյուղին՝ կոլխոզ, շոգեգութաց, գյուղին
նոր կյանք,
բաղաքներին՝ շոգի, պղինձ ու էլեքտրիկ,—
կերտում, ստեղծում են պողպատակամ—
հնգամյա թվերը ինդուստրիկ:

Քարը՝ քարի, մետաղը՝ կյանքի հետ—
մենք կերտում ենք մի նոր աշխարհ.
հնգամյա պլանը, հնգամյա թվերը
ու բայշևիկյան պայքար:

Բայշևիկյան պայքար՝ հնգամյակի համար,
բայշևիկյան պայքար՝ թշնամու դեմ,
զորահավաք ուժի և կամքի համար
ու բայշևիկյան թվեր:

Թվեր՝ պողպատ, պղինձ, չուգուն դարձող,
թվեր՝ հաղթանակի, մաքառումի, փառքի,
ու բանակները կամքի խրոխտ, ստեղծագործ,
ու արշավանքը՝ մեր հաղթող դասակարգի:

Կրկին ճակատ է համառ ու մարտական,
կրկին գրոհ է ու վճռական պայքար,
անդավաճան ու աննահանջ—
հնգամյակի համար, հնգամյակի համար:

Գյուղին՝ կոլխոզ, շոգեգութաց, գյուղին նոր
կյանք,
բաղաքներին՝ շոգի, պղինձ ու էլեքտրիկ.
բայց այդ ի՞նչ, այդ ի՞նչ արնոտ թվեր են
պարգած—
հնգամյակին:

Բ.

Կրկին արնոտ պատերազմի—
սև ամպերն են պատել մոայլ,
կրկին—
մահու,
տենդի,
գազի
դրոշներն են յերկրի վրա:

Կրկին խաղաղության սխեմ հագած—
պատերազմի արնոտ սուրն է սրում—
կապիտալը ագահ,
այսինքն—
ելի Մորգան,
Ռոդշի'լդ,
Լուշեր,
Դետերդինգ,
ու Ֆորդ,
ու Ցունգ,
մինչև՝ Մակդոնալդ արքա,
մինչև սոցիալ-բանդիտ, արյունռուշտ—
Ցերգիբել,
ու դեռ—
Զեվերինգ,
Մյուլլեր
յեվ Պոլ Բոնկուր:
Այսինքն—
սոցիալ-ֆաշիստական բանակ,
ՑԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ·—
խաչի վրա յերդում,
Պիոս պապ ու···
Պարոն Դաշնակցություն·—
այսինքն—
ելի մտրակ,
ու մառզեր,
ու սուր,
ելի հայդուկ ու խմբապետ—
Սեպուհ,
Դրո,

ելի մոխիր,
ելի հրդեհ,
ելի Հիտլեր,
կործանում ու կրոն:

Ու վոռնում են նրանք տենդոտ,
արնակզակ,
շնգշնգացող ժանիքներով
ու անոթի,
կապիտալի մահու նանկեր արնենիզակ
մեր դեմ—
արնոտ, պոդպատ դունչեր թնդանոթի:

Մեր դեմ—
մահու հին աշխարհի
վերջին գրոհ,
մեր դեմ—
մեռնող դասակարգը—
գրահ հագած,
ՓԱՅԼԻ'Ր ՓԱՌՔՈՎ—
ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՊԱՅԾԱՌ ԴՐՈՇ—
ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ԽՆԴՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Փայլի'ր կրկին·
հրակարմիր քու փայլի տակ—
մենք դուրս կգանք
վերջին անգամ,
վերջին մարտի·
վոդջ աշխարհով—

պողպատակամ ու անխորտակ
մեր բանակը—
ՎԵՐՋԻՆ ԴՐՈՇԸ ԿԸ ԾՎԱՏԻ:

Իսկ այժմ—
մկա՛ն,
Իսկ այժմ—
կա՛մք,
կորո՛վ է պետք,
մաքառումի ու հպարտության գրո՛հ համար:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԱՐՏԻ ՀԱՄԱՐ—
ՎՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ, ԿՅԱՆՔ,
ՎՈՂՋՈՒՅՆ ՔԵԶ, ՄԱՀ:

ՀԱՎԵԼՎԱԾ

17.749

ԳԻՆԸ 25 ԿՈՊ. (1¼ մ.)

АЛАЗАН

ПОЭМА О ВОЙНЕ, МИРЕ И ПЯТИЛЕТНЕМ ПЛАНЕ

Госиздат ССР Армении
Эривань — 1931